




ՄԱՆՅԱ ՂԱԶԱՐՅԱՆ

ԷԶՄԻԱԾՆԻ ՀԱՐՍՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ *

ՄԵՏԱՂ

Էջմիածնի վանքի մետաղյա իրերի հավաքածուն ընդգրկում է բազմաբնույթ ըստեղծագործություններ, որոնք պատրաստված են ոսկուց, արծաթից, վարջամից, անագից, պղնձից և երկաթից: Հաճախ դրանք ոսկեծուլ են, ոսկեզօծ կամ արծաթապատ: Դրանց պատրաստման ժամանակ օգտագործվել են դրվագման, կոփման, ձուլման տեխնիկաները՝ գործադրելով մասնակազմ, փորագրումը, զուգաթելը (ֆիլիգրան կամ չիֆֆիչի), հատիկավոր մախշազարդումը, որոնք շատ հաճախ հանդես են գալիս իրար զուգորդված: Մետաղյա ստեղծագործությունների զգալի մասը ընդելուզված է թանկարժեք ու կիսաթանկարժեք քարերով: Հավաքածուի իրերը հիմնականում բերված են հայկական մետաղամշակման կենտրոններից՝ Անիից, Թոքատից, Կ. Պոլսից, Վանից, Սեբաստիայից, Կարիներից, Կեսարիայից, ինչպես նաև Կիլիկիայի, Վասպուրականի, Արցախի, Ծիրակի, Սյունիքի և Արարատյան դաշտի քաղաքներից ու ավաններից: Բոլոր վայրերում պատրաստել են միատե-

սակ իրեր, պատրաստել են համարյա մույն տեխնիկական միջոցներով, սակայն այդ իրերի վրա միասնական ազգային մտածողության հետ տեսնում ենք ինչպես տվյալ վայրի, նույնպես և տվյալ վարպետի գեղարվեստական հետաքրքրությունների կնիքը:

Օրինակ՝ Վանում մոտ 90—100 ոսկերչական խանութ-արվեստանոց կար: Մեկ տարում Վանից միջին հաշվով 600.000 գրամ արծաթյա իրեր էին արտահանում, իսկ նույնքան մաքուր արծաթ ներմուծվում էր Եվրոպայից: Վասպուրականի ոսկերիչների աշխատանքներին բնորոշ են ձևերի բազմազանությունը, զարդանախշերի հնարամիտ հարստությունը, որոնք թելադրված էին նաև նրանց մոտ լայն տարածում ստացած տեխնոլոգիաներից: Վան-Վասպուրականի վարպետները ստաշնությունը տալիս էին զուգաթելի տեխնիկային, որի միջոցով ընտիր ցանցկեն տարածքներ էին ստեղծում, դրանք զարդարում հատիկավոր մանր գեղիկներով: Այստեղ կարևորը ոսկու կամ արծաթի թելի ստացման եղանակն է. քարակ մետաղյա թելը հյուսվում էր երկտակ, տափակեցվում և օգտագործվում ժանյակաձև հյուսվածք ստանալու համար: Դրանց հատման մասերում արծաթե փոքրիկ հատիկներ էին կաթեցնում: Վասպուրականի ոսկերիչները յուրօրինակ ճարտարապետներ էին, քանդակագործներ ու նկարիչներ: Դրանք «կառուցում էին» ոսկերչական իրը՝ յուրաքանչյուրի համար գտնելով միայն ու միայն այդ իրին բնո-

* Ծարուհաված «Էջմիածին» ամսագրի 1987 թվականի № № 8—9-ից:

1 Հայկական միջնադարյան արհեստներին, ինչպես նաև մետաղամշակությանն է նվիրված Բ. Ա. Ռաբելյանի «Քաղաքները և արհեստները Հայաստանում IX—XIII դդ.» ուսումնասիրությունը, Բ. 1, Եր., 1958, Բ. 2, Եր., 1964:

րոշ. ձև, ծավալների արտահայտչականություն:

Կարին-Ախալցխայի ոսկերչական արվեստը նույնպես բազմաժանր է: Դա թելադրված էր նրանց կենցաղով: Եթե վաւորականի ոսկերչական դպրոցը հիմնականում խարսխված է ժողովրդական մտածողության պարզության վրա, ապա Կարին-Ախալցխայի ոսկերչական արվեստը հայկական կիրառական արվեստի մաքուր ված, հղկված ու ազնվացած գեղագիտության բարձր արտահայտությունն է:

Թոքատցի վարպետները սիրում են հարթ, մեծ տարածքներ, որոնց վրա տեղադրում են դրվագված փոքր հատվածներ և այլն:

Էջմիածնի վանքի հավաքածուում կան տարբեր դպրոցների պատկանող բազմաթիվ մետաղյա ստեղծագործություններ, որոնց թիվն անցնում է 2.000-ից:

Ջանազան ճանապարհներով Էջմիածին բերված մետաղյա ստեղծագործություններից զատ, պահպանվել են որոշ իրեր, որոնք 1896 թ. վանքի տարածքում կատարված պեղումների ժամանակ հայտնաբերվեցին Մայր տաճարի արևելյան կողմում գտնվող հին տպարանի ներքին հարկի պահեստների դարաններում: Դրանք մոտ 1000 հատ կարմիր պղնձյա (երբեմն՝ անագապատված) ամաններ էին, որոնք պատրաստվել էին Թոքատում և նվիրաբերվել Էջմիածնի, ա. Հոփսիսմեի, ա. Գալանի, Խծկոնքի, ա. Գեղարդի վանքերին: Այդ իրերը այն ժամանակ ցուցակագրել էր Էջմիածնի վանքի միաբան Գ. Տեր-Մկրտչյանը (Մ. Ամատունու օժանդակությամբ) և հրատարակել²: Գ. Տեր-Մկրտչյանը ձեռագիրն ողարկել էր նաև Պետերբուրգի կայսերական հնագիտական ժողովին³:

Մետաղյա իրերի արձանագրությունների շնորհիվ հայտնի են դառնում արհեստավորների նոր անուններ, որոնք ընդլայնում են հայ արվեստի երախտավորների սուղ ցուցակը: Դրանց թվում են Թոքատցի Ա. Կորբը, Խախաչի Հովհաննեսը, սրբանկարներ պատրաստող Մկրտում Քանաքեղյան,

վանեցի Հայրապետյանը (հետագայում Թիֆլիս տեղափոխված անվանի ոսկերիչ Մ. Այրապետովը), Ավետիք վարպետը, Տիգրան Ավագյանը, Հարություն Ջարգարյանը և այլք:

Հավաքածուի կարևոր առանձնահատկություններից է բազմատեսակ մասունքների առկայությունը: Դրանք ոչ միայն ընդհանուր Եկեղեցու սրբերի, այլև Հայ Եկեղեցու կողմից սրբացված պատմական անձնավորությունների մասունքներ են. ա. Գևորգի, ա. Սարգսի, ա. Թադևոսի, ա. Բարթողիմեոսի, ա. Հոփսիսմեի, ա. Գալանի, Սանդուխտ Կույսի, Վարդանանց նահատակների և այլն: Պահպանվել են նաև սրբազան առարկաների մի շարք մասունքներ. Նոյան տապանի, Կենաց փայտի, Բրիստոսի տաշտակի, Գեղարդի և այլն: Եթե չկա նվիրապետական արձանագրություն, ապա յուրաքանչյուրի վերաբերյալ կա արձանագրություն՝ հատուկ թղթի վրա գրված և դրված մասունքի վրա:

Մասունքների պաշտամունքը հնուց տարածված էր Հայաստանում: Մուշում գտնվում էին Հովհաննես Մկրտչի, Նարեկում՝ ա. Թովմաչի, Աղվանքում՝ Գրիգոր Լուսավորչի, Հոփսիսմեի, Գալանի, բժիշկ Պանտելեյմոնի, Մուղնիում՝ ա. Գևորգի, Հովհաննավանքում՝ ա. Կարապետի մասունքները, Բրիստոսի վարջամակը և այլն: Ֆրանսիացի ճանապարհորդ Ծարդենը Էջմիածնի վանքի կարևոր հարստությունն է համարում այնտեղ պահպանվող մասունքները: Հիշենք, թե ինչպես Ս. Դավրիժեցին պախարակում էր Մեփիսեղեկ կաթողիկոսին, որը «զնշխարս սրբուհուն Հոփսիսմեայ յաղագս կաշառաց թոյլ ետ ֆռանկաց՝ զի տարան», և թե որքան ոգևորված էր Փիլիպպոս կաթողիկոսի կատարածով, երբ նա Հոփսիսմեի տաճարը վերանորոգելիս գտել էր սրբուհու նշխարների արկղն ու այն տեղավորել նորակառույց մատուռում⁴: Ուշագրավ է, որ հին Ջուղայից Սպահան գաղթեցված ժողովուրդը, որը վերադառնալու մեծ հույսեր ուներ, գաղթի ժամանակ հայրենի հողում թողել էր իր ունեցվածքն ու սրբությունները: Կաթան և կեղեցում ուն հավատացյալ հետագայում գտնում է խեցու մեջ դրված, ապա փայտյա արկղում պահված մասունքներ, որ հետագայում հանձնում է Դարաշամբի ա. Ստեփանոս Նախավկայի վանքին: Մասունքների վրայի մագաղաթին արձա-

² «1896 թվին Ս. Էջմիածնում գտնված հին պղնձեղեն ամանների ցուցակը և արձանագրությունները»: — «Բանասեր», Փարիզ, 1906:

³ Երևան, Մատենադարան, Գ. Տեր-Մկրտչյանի ֆոնդ, թղթ. 24, վավ. 144—146: Ցուցակն այժմ պահպանվում է Լենինգրադի ՍՍՀՄ գիտությունների ակադեմիայի պետական արխիվում, Ն. Մառի ֆոնդում:

⁴ Ս. Դավրիժեցի, Աղվ. աշխ., էջ 156, 252—253:

նագրված էր. «Այս է մասն նշխարաց սրբոյն Յովհաննու Կարապետին, զոր Գրիգոր Լուսաւորիչ եղբոր ի Հայս, և եղ ի քաղաքն Խրամ, իսկ ի յաւերման Խրամ քաղաքին, ի ՆԻԱ [1485] թուին Հայոց բերին ի Ջուղայ»: Նոր Ջուղայի քաղանքար խոջա Նազարը մատուցներ ի մի մասը կարողանում է տանել, իսկ մյուս մասի համար «կազմեցին վասն նշխարացն զայլ իմն արկղ արծաթեայ աղիսաձև, և արարեալ ոսկեգօծ և ընդելուզեալ ակամբք պատուականօք, և անդ հանգուցին զընդհար արքայն Յօհաննու Կարապետին: Եւ գրեցին ի վերայ պահարան համառօտ բանի զամենեւեան անցուածք պատահմանցնս այնոցիկ և եղին ի նոյն վասն սրբոյ Նախավկային ընդ այլ բազմահաւաք սրբութեանցն»⁵:

Մասնատուփերը կամ մասանց պահարանները ստեղծվում էին մատուցները պահպանելու նպատակով: Դրանք Հայաստանում լայն տարածում ստացան Զաքարյան, իսկ Կիլիկիայում՝ Ռուբինյան թագավորությունների ժամանակ:

Մասանց պահարանները հիմնականում քառանկյուն տուփեր են՝ արծաթյա և ոսկեգօծ, երբեմն զարդարված թանկարժեք կամ կիսաթանկարժեք քարերով, իսկ երբեմն՝ արծնյա հավելումներով:

Կիլիկյան նշանավոր Սկևռայի մասանց պահարանին (1293 թ., Լեմհագրադ, Էրմիտաժ), ինչպես նաև XIII դ. արծաթյա կազմերին առանձին ուսումնասիրություն է նվիրել բազմավաստակ արվեստագետ Ս. Տեր-Ներսեսյանը⁶: Էջմիածնի մասանց պահարանները գրավել են հայ արվեստի երախտավոր Գարեգին կթղ. Հովսեփյանի, ինչպես նաև արծաթագործ Հ. Տեր-Ղևոնդյանի, Լեմհագրադի պետական Էրմիտաժի գիտաշխատող Ա. Կակովկիների ուշադրությունը: Հայկական ոսկերչական արվեստի կարևորագույն հատվածը կազմող մասանց պահարանները բավական ուսումնասիրված են, ճշտված է նրանց կատարման ժամանակը, բնութագրված պատմա-գեղարվեստական արժեքը:

Էջմիածնի վանքի հավաքածուի մասանց պահարանների մի մասը նոր միայն դրվում է շրջանառության մեջ և մատչելի դառնում ուսումնասիրողներին: Դրանց կարևորա-

գույն առանձնահատկությունը հայկական երանգն է, որը հնարավոր է դարձնում դրանք դիտել և գնահատել ազգային մշակույթի (ճարտարապետություն, դեկորատիվ քանդակ, խաչքար, մանրանկարչություն) ընդհանուր զարգացման ընթացքի մեջ: Կիլիկյան արվեստը հնարավոր չէ այսօրինակ հստակ ազգային շրջանակների մեջ դիտել: Այդտեղ մենք գործ ունենք բազմաթիվ երևույթների, այդ թվում նաև բյուզանդական ազդեցությունների հետ: Անշուշտ, Բյուզանդիայում պատրաստված իրեր հայտնի էին նաև Հայաստանի մյուս գավառներում: Օրինակ՝ Սմբատ I-ի կողմից Յուսուֆին տրված նվերների մեջ էր «և կամար ի համակ ոսկոյ՝ գործ շոտմայական ճարտարաց, յերանգս գունակ գունակ ապակոյ»⁷: 1282 թ. Լևոն III-ը Սյունիքի եպիսկոպոս Տեր Հայրապետին նվիրեց հունական ընտիր ասեղնագործ մետաքսեղեն. «զգեստ Սեղանոյն յարքունական մետաքսից զբիզանդացին որ ի Յունաց ճարտարացն անմման կիտուածօք, և խաչ պատուական ի սպիտակափայլ և ստոնատեսակ քարանց համակ կերպացեալ և պնդեալ յոսկում, և սկիհ պատուականք ի գուտ արծաթոյ. և այլ բազում պարզևս»⁸: Ամիդի արքեպիսկոպոս Մկրտիչը 1447 թ. տեղի կաթողիկե եկեղեցուն նվիրաբերեց Տրապիզոնից բերված «զմեծ սկիհն՝ զանագան յօրինուածով, ոսկեգօծ և յոյծ պատուական, որ ոչ ուրեք գտանի այնպիսի փառաւոր սկիհ, փարթամ և գերաշխարհիկ, 182 մտղայ թուլիճայ (մաքուր) արծաթ ոսկեգօծ, և միմա-քարի (արծն)»⁹: Կ. Պոլսից բերված Սեբաստիայի 1066 թ. նշանավոր արվեստարանի կազմը (Երևան, Մատենադարան, ձեռ. № 311, կազմը չի պահպանվել) նույնպես բյուզանդական ծագում ուներ և այլն¹⁰: Օրինակները կարելի է շատացնել այլ տվյալներով, սակայն փաստ է, որ Էջմիածնի մասանց պահարանները գուտ հայկական ծագում ունեն¹¹:

⁷ Հովհաննես Կաթողիկոս Դրասխանակերտցի, Պատմություն հայոց: Թիֆլիս, 1912, էջ 198:

⁸ Ստեփանոս Օրբելյան, Պատմություն մահանգին Սիսական: Թիֆլիս, 1910, էջ 434—435:

⁹ Ղ. Ալիշան, Հայապատում: Վեներտիկ, 1801, էջ 574:

¹⁰ Գարեգին Հովսեփյան, Հիշատակարան ձեռագրաց: Հ. I, Անթիլիաս, 1951, էջ 248—250:

¹¹ Լևոն Բ-ին պատկանող մի մասանց պահարան հայտնաբերել է Ե. Լալաջանը: Մասնատուփի պատմությունը կապված է Կարինի, Երուսաղեմի, Արդահանի, Բարսեթի և Գյումրիոյի հետ: Մասնատուփի վրա Խաչկոյություն է պատկերված, իսկ

⁵ Նույն տեղում, էջ 403—405:

⁶ Sirarpie Der Nersessian, Le reliquaire de Skevra et l'orfèvrerie étienne aux XIII^e et XIV^e siècles.— «Revue des Études Arméniennes», t. I, Paris, 1964, pp. 121—147.

Ավելին, սրանք շատ ավելի հին օրինակներ են ներկայացնում, որոնց շնորհիվ ընդլայնվում են ժամանակագրական և հետևաբար գեղարվեստա-ոճական առանձնահատկությունների շրջանակները:

Էջմիածնի վանքի մասանց պահարաններից հնագույնը ս. Ստեփանոս Նախավրկայի մասանց պահարանն է (Մետաղ № 146): Պահարանի վերևում պատկերված է դասական հորինվածք՝ զահակալ և օրհնող Քրիստոսը գավազանակիր երկու հրեշտակների հետ, ինչպես նաև տանջանքի գործիքները: Կենտրոնի դռնակի վրա Ստեփանոս Նախավրկան է, որի ոտքերը ծածկվել են հետագայում ագուցված ձվաձև մեծ քարով (XVII դ.): Սուրբ բռնել է բուրվառ և սկիհ: Կողքերին ս. Պետրոսը ու ս. Պողոսն են, իսկ ցածում պատկերված է եղել Ստեփանոս Նախավրկայի քարկոծման տեսարանը, որտեղ, ըստ կանոնական պատկերման, լինում են Ստեփանոսը, քարկոծող մարդը և Սավուղը: Միայն քարկոծող մարդու պատկերն է պահպանվել: Պահարանի ետևում արձանագրությունն է. «Յիշեա Քրիստոս Աստուած զաշխատողս եւ նոր/ոգոս սուրբ ճշարաց/ս եւ զխորագմն ոսկե/րիչս թվականութեան հալոց 2005»: Այսինքն՝ մասնատուփը նորոգել է Խորագմ ոսկերիչը 1302 թ.: Ելնելով պահարանի մշակման ձևերից՝ այն հրապարակող... Լ. Տեր-Ղևոնդյանը ճիշտ հետևելություն է անում, ճշելով որ մասնատուփը X դարի է¹³: Միայն այս հանգամանքն արդեն նշանակալից է դարձնում մասանց պահարանի արժեքը: Պահարանի ձևը նույնպես նրա վաղեմիության հավաստիքներից է:

Ս. Ստեփանոս Նախավրկայի մեկ այլ մասանց պահարան պատրաստվել է 1692 թ. Քանաքետում ոսկերիչ Եղիկի որդի Ավետի ձեռքով (Մետաղ № 159), մեկ ուրիշը

բերված է Թավրիզից և նույնպես 1692 թ. (Մետաղ № 729), իսկ Մուշից բերված ս. Ստեփանոսի մասունքների պահարանը ստեղծվել է 1663 թ. (Մետաղ № 160):

№ 146 մասանց պահարանին նման մեկ այլ պահարան (Մետաղ № 96), նույնպես X դարի, ուղիղ և հարթ կողերով պատրաստվել է ս. Բարթոլոմեոսի գավազանի մասնիկի համար, նորոգվել 1443 թ. Ղուբաթյան վարդապետի կողմից Աստապատում: Հիշենք, որ այստեղ ս. Բարթոլոմեոսի անվան եկեղեցի կար: Այս պահարանի դռնակների վրա պատկերված են ս. Պետրոսն ու ս. Պողոսը: Պահարանի պարզությունը, նրա մշակման և գրության ձևի առանձնահատկությունները թելադրում են, որ այն իրոք X դ. գործ է, ուշ վերանորոգմամբ¹⁴:

Մի քանի դար հետո փոխվում են մասանց պահարանների պատրաստման սկզբունքները: Դրանց դռնակները դառնում են վերևում սրածայր երկփեղկ, որոնք խորհրդանշում են «որումք դրախտի» և ստանում են գեղարվեստական հատուկ ձևավորում: Լավագույն օրինակներից է «Խոտակերաց ս. Նշանը» (Մետաղ № 731)¹⁵: Անունը ստացել է Վայոց Ձորի Արփա գյուղի մոտ գտնվող վանքից, որը հայտնի է նաև Քարակոփ անվանումով:

Պահարանի ընտիր կոմպոզիցիան (վերևում զահակալ Քրիստոսն է չորս ավետարանիչների խորհրդանշերի հետ, ցածում՝ Աստվածամայրը, Հովհաննես ավետարանիչը, Հովհաննես Մկրտիչն ու Գրիգոր Լուսավորիչը, դռնակների ներսում՝ Միքայել ու Գաբրիել հրեշտակապետները), ֆիգուրների շարժման արտահայտչականությունը, զարդանախշերի (արմավե-

¹³ Լ. Տեր-Ղևոնդյան, նույն տեղում: Նաև՝ А. Я. Каковкин, Хранилище «Частич посоча» Апостола Варфоломея из Эчмиадзина.—«Լրաբեր հասարակական գիտությունների», 1973, № 1, էջ 69—74:

¹⁴ Խոտակերաց ս. Նշանի պահարանն առաջին անգամ հիշատակված է Լ. Ծախաբունյան, ճշլ. աշխ., էջ 65: Պահարանն առանձին ուսումնասիրության նյութ է դարձրել Գարեգին Հովսեփյանը. «Ոսկերչական արվեստի մի նմուշ ԺԳ դարում (Խոտակերաց ս. Նշան)»: —«Գեղարվեստ», Թիֆլիս. № 4, էջ 138: Առանձին հոդվածներ են մվիրել նաև Լ. Տեր-Ղևոնդյանը, Հայկական արժաթագործության արվեստի գոհարները: —«Էջմիածին» 1964, Ը—Թ, էջ 28—34 և Ա. Կակովկինը. Памятник армянского художественного серебра XIII века.—«Լրաբեր հասարակական գիտությունների», 1977, № 9, էջ 76—89:

անկյուններում՝ փոքր դիմաքանդակներ: Ետևի հարթ տարածության վրա տեղադրված արձանագրությունից պարզվում է, որ այդտեղ պարփակված են Հակոբ Մծբնա Հայրապետի, Ստեփանոս Նախավրկայի, Նիկողայոս Աքանջեղագործի և Պանտելեյմոն բժշկի մասունքները: Հեթում Բ-ի վրի խաչը դրված է արծաթյա փորվածքի մեջ՝ զարդարված անհամաչափ դասավորված տարբեր մեծության և տեսակի քառասուն քարերով: Մասնատուփը պահպանվել է նույն Գյումրիորդում: Ե. Լալայան, Ջավախք: Ա. հատոր, Թիֆլիս, 1897, էջ 41—42:

¹² Լ. Տեր-Ղևոնդյան, Հայկական արծաթյա մասնատուփերի երկու հին նմուշներ: —«Էջմիածին», 1962, Դ, էջ 46—50:

նի) ոլորում ակտիվ դիրքով (մանրամասնարձեղին բնորոշ գուգորդումներով), ընդգրծված գրաֆիկական հատվածները, պահարանի ներսում տեղադրված խաչի մոնումենտալ ուրվագիծը, դրվագման քարձր վարպետությունը, լույսի և ստվերի գունաչին հարստությամբ օծոված արտահայտչականությունը ոչ միայն պահարանը ստեղծող վարպետների մեծ կարողությունների, պատվիրատու Եաչի իշխանի գեղագիտական քարձր ճաշակի վկայություններն են, այլև հայ արվեստի այդ ժամանակի քարձր մակարդակի արտահայտությունը: Պահարանն ունի ընդարձակ արձանագրություն. «Կամա կարողին այ. Ես Եաչի որդի Հասանայ որդի Պոռա/ որդի մեծին Վասակա յագգէ / Հաղթականց տիրեցի հայրենի երկր/սս իմո Ծապունեաց եւ այլ լո/ով գաւառաց գաւառիզն եւ օգնա/կան ունելով գՔս. եւ գըք. Նշանս / Խոտակերաց որով եւ նախնիքն իմ գօրացան ետու կազմել պահարան / սմին անջինջ իշատակ. որք. հանդիպիք սմա զիս եւ ծնո/ողս նմ գամիր Հասան եւ գը/աճեր եւ զհարեղբայրն ի/մ գպապք յաղաթս յիշե/ցէք այլ եւ զամենայն նախ/նիսն մեր եւ զագգատոհմն», «Ար. Նշան տէրունական դու Էաչս / լեր օգնական թվ. 2100» (1300 թ.): Ինչպես տեսնում ենք, արձանագրությունը վերաբերում է պահարանին: Խաչը շատ ավելի հին է: Խաչի ավելի վաղ շրջանում պատրաստված լինելը հաստատում են ինչպես խաչի ձևը՝ սրածայր, տերևանման երկմաս թևերով, նույնպես և 1292 թ. գրված մի ձեռագրի հիշատակարանի «ստակալի եւ սխարագործ Նշանացս Խոտակերաց եւ Խիկարաց» արտահայտությունը և խաչի Ոճով գյուղի մենաստանում լինելը: Գարեգին Հովսեփյանը գտնում է, որ այն կարող էր պատկանել Սյունյաց իշխաններին, իսկ XIII դ. անցել է Օրբելյաններին, քանի որ Ստ. Օրբելյան պատմիչը գրում է, թե Խոտակերաց կամ Քարակով վանքում էր «ահարկու եւ աստուածահրաշս. Նշան, որ Խոտակերաց կոչի»: Սմբատ Օրբելյանը Ավագ ճշանի համար ոսկե պահարան է շինել «ի կերպ աղիսակի ունելով դրունս երկբացիկս», իսկ Ստեփանոս Օրբելյանը Արցախի Դեմնյանց իշխաններից գնել է նրանց հայրենական խաչը, ոսկով և թանկագին քարերով պատել այն և ապա «յուսկոյ և արծաթոյ ի ձև աղիսակի գեղեցիկ յօրինուածովք և երկբացիկ դրամքք» պահարան կազմել¹⁵:

¹⁵ Գարեգին Հովսեփյան, Խաղրակեանք կամ Պոռնեանք հայոց պատմութեան մէջ: 1968, Ամթիւս, էջ 100:

Խոտակերաց ս. Նշանի պահարանի կոմպոզիցիայում իշխողը շքերթային տրամադրությունն է (ի հակադրություն Սկևռայի պահարանի ձևավորման), որին նպաստում է նաև կենտրոնի ծաղկած խաչը՝ գունավոր քարերով զարդարված (18 հատ, որից 8-ը՝ նոնաքար), կենտրոնում ունենալով Կենաց փայտի մասնիկը: Փակ վիճակում այն ունի զուսպ և հանդիսավոր արտահայտչականություն: Պայծառ և լավատեսական տրամադրության պատրանքի ստեղծումը հասկանալի է դառնում, եթե նկատի ունենանք, որ պահարանը նվիրված է Էաչի իշխանի կողմից Ծապունյանց երկրի գրավման մեծ հաղթանակին:

Խոտակերաց ս. Նշանը գալիս-համարում է XII—XIII դդ. հայ մշակույթի գլխադրոծոցները:

Պոռնյան տոհմի սրբություններից է նաև Նոյան տապանի մասունքը, որի մասին հիշատակություններ կան դեռևս XII դարից: Ներկա պահարանը պատրաստվել է 1698 թ. (Մետաղ № 691): Պետք է ենթադրել, որ ներկա պահարանի ստեղծման սկզբունքները կրկնում են նախորդի ձևերը: Այն նման է Խոտակերաց ս. Նշանի պահարանին. երկփեղկ է, սրածայր, ցածում (ուղիղ «ի կերպ աղիսակի»), ինչպես բնորոշում է այսօրինակ պահարանները Ս. Օրբելյանը), շատ ավելի ունալ ծաղիկների լայն շղթայով, ցածի երկու անկյուններում քառաթև, իսկ վերևում երկթև հրեշտակների գլուխներով: Փեղկերի վրա պարզունակ գծագրությամբ դրվագված են թևատարած հրեշտակը՝ տապանի բեկորը ձեռքին, և այն ընդունող Մծբնա Հակոբ Հայրապետը: Կերպարները պատկերված են կենցաղային հանգիստ պայմաններում և օծոված են որոշակի ազգային ինքնատիպությամբ: Պահարանը պատրաստել է քանաքեղի ոսկերիչ Ալեմդին:

Հավաքածուի արժեքավոր հնություններից է նաև Արագածի ս. Նշանը (Մետաղ № 732), որը XIII դարից է, այսինքն՝ այն ժամանակներից, երբ Վաչե Վաչուռյան իշխանի կողմից 1215 թ. կառուցվեց Սաղմոսավանքի կենտրոնական ս. Սինաս կամ ս. Նշան եկեղեցին (հիշենք, որ այս վանքի տեղում եղած Լուսավորչի անապատի հետ է կապված Լուսավորչի կանթեղի ավանդությունը):

Այս սրբության մասին Վարդան Արևելցին գրել է. «Այս եւ սուրբ ոխտն Յոհանավանք, որ կայ Նշխարքն սուրբ Կարապետին եւ վարչամակն Քրիստոսի, եւ սուրբ բեւեռն աջոյ ձեռին, եւ սուրբ աջն Նախավկային, եւ Բ կողքն սուրբ Կարա-

պետին», «Եւ ի միւս կողմանէ երկիրն Կարբոյ, ուր կան սուրբ ուխտիքն Սաղմոսականք, եւ սուրբ անապատն Հրեշտակաբնակ, ուր կայ սուրբ Նշանն Արագածոյ, եւ օճախալած սուրբ Նշան, որ ունի մասն ի Կենաց փայտն արիւնաներկ, ... եւ աստուածընկալ սուրբ Նշանն, Գոռոզ սուրբ Նշանն, Տերունական սուրբ Նշանն, եւ սուրբ Յակոբայ Մօքնայ հայրապետի աջն, եւ սուրբ Յակոբայ Տեառնէոր մատն...»¹⁶:

Պահարանը փայտն խաչի մնացորդներով է, ունի արծաթե պարզ խաչ՝ կիսաթանկարծեք կլոր քարի տակ պահպանված Կենաց փայտի նշանով: Այս ամենն առնված է ծաղկազարդ արծաթե պարզունակ պահարանի մէջ: Պահարանի արձանագրությունը դրժվարընթեռնելի է և բարդ շարադրանք ունի, որից պարզվում է պահարանի Սաղմոսականքից լինելը: Պահարանի ներսում թողյոթ կա՝ վրան ռուսերեն գրված. «ИЗЪ МОНАСТЫРЯ СВ. АРАГАЦА. ИМЯ НЕИЗВЕСТНО. № 2»: Մեկ այլ մասանց պահարանի ներսում (Փայտ № 1) նույնպես փայտե հին խաչ է դրված (XIII դ.), XVIII դ. պատրաստված խաթամե շրջանակի մէջ¹⁷: Խաչի վրա մեխանման մետաղներ են ամրացված, որոնք, ըստ ավանդության, Քրիստոսի փշե պսակի մետաղներից են:

Ինչպես կիրառական արվեստի յուրաքանչյուր ստեղծագործություն, նույնպես և մասանց պահարանները գնահատելիս պետք է ունենալ արժեքավորման մի քանի մոտեցում՝ պատմական, հնագիտական, գեղարվեստական և այլն: Էջմիածնի հավաքածուի բոլոր մասնատուփերը գնահատվում են ըստ այս արժեքավորումների: Պատմական և հնագիտական առումով հետաքրքիր են մի քանի օրինակներ:

Մի մասանց պահարան Սանահնի վանքին է նվիրել Հովսեփ Արղության Երկայնաքաղուկը (Մետաղ № 767): Բարձրությունը 38,2, լայնքը 22, իսկ հաստությունը 4,3 սմ է, արծաթից է, քաշը 2885 գրամ: Արձանագրությունն է. «Յեզ աներման աշխարհին վրաց ի պարսիկ աղայ Մահմուտխանէն (ի թուին ՌՄԽԴ) 1795 (հրամանաւ ռուսաց կայսրոսի/ոյն Եկատերինէի ընդ զօրացն Բօրին եկի ի հայրենի աշ/

խարհն իմ սակս օգնութեան և չորայ ի յերկրպագութիւն վանօրեիցն / մերոյ Հաղպատու և Սանահնու և տեսի զամայութիւն անցին / և մղկտեցայ ի վերայ անցին վասն որոյ կազմեցի զպահար/անս և եղի ի սմայ զմագ և զհանթերցից ինչ սուրբ Աստուածած/նի և ընծայեցի Սանահնու սուրբ մերոյ ուխտին ի յիշատակ / ինձ յեղից աստի և նախնոյ իմոյ Զաքարիայ ամիր սպասարին հայոց և վրաց նաև ծնողացն իմոյ Օիօշբէկին և / պատրօն Բեթէլսանին և իշխանագնեայ եղբարցս Մովսէսին Բե/ծանին և Փարսադանին և բարեշատաւիդ որդւոց և դստերաց / անցին իսկ որք կարդայք յիշեցէք յաղօթս զսանահնեցի Եր/կայնաքաղուկ Արղութեանց Յովսէփ արքեպիսկոպոս Առաջ/նորդ ռուսաց երկրի ամենայն հայոց ազգին և հիմնատիր երկրաց Բաղաքացն Հայոց Նոր Նախիջևանու և Գրիգորիպոլու յամի տէառն 1797 և ի թուին Հայոց ՌՄԽԶ ի Մօսկով ձեռամբ Դավիթ Աստուածատրեանի»¹⁸:

Արղության-Երկայնաքաղուկը մասանց պահարանը պատրաստել է դեռևս X դ. Հաղպատում պահպանվող Ավագ ս. Նշանի համար¹⁹:

Մեկ այլ մասանց պահարան վերջերս է բերվել Էջմիածնի վանք Թրիխիսի Ս. Էջմիածին եկեղեցուց (Մետաղ № 970): Այն երկփեղկ է՝ վերևում սրածայր: Դռնակների վրա դրվագված են ս. Պողոսը ու ս. Պետրոսը, իսկ պահարանի ներսի խորության մէջ պատկերված է փշապին միգակահարող ս. Գևորգը: Արձանագրությունն է. «Զպատկերս սրբոյն Գեորգեա յառաջագոյն ի հան/գուցեալ հօրէն իմնէ Գրիգոր Սուրբանէանէ՝ ի տիպ/սրբոյն Գեորգեա երգահաս զօրավարին քանդակցու/ցեալ նուիրեալ էր նորին հիահրաշ նշխարք որ ի / Բօլմիս եղելոյ, իսկ այժմ ես որդի Գրիգորի Դաւթի Սուրբանէանս մինչ տեսի զայս յիշատակ հօրն իմոյ / յեվէտ իմն փոքր բարեալ լցանախչու զոր և ետու / մեծացուցանել եռապատիկ մեծութեամբ քան զոր յառաջն / էր որոշ բոլոր արծաթի գունն եղև 394 մըս/խալ ո-

¹⁶ Աշխարհացոյց Վարդանայ վարդապետի: Փարիզ, 1960, էջ 26—27:

¹⁷ Խաթամը արևելյան ժողովուրդների կիրառական արվեստում ընդունված և լայն տարածում ստացած արվեստի տեսակ է: Ուղտի ուկորներից պատրաստված և գունազարդված ձողիկները երկրաչափական և բուսական մանր զարդերով ամրացվում են փայտի վրա:

¹⁸ Այսօրինակ մեկ այլ ոսկեգօծ արծաթյա մասնատուփ, արձանագրության մեկ այլ տարբերակով (աննշան փոփոխություններով), պահպանվում է Հայաստանի պատմության պետական թանգարանում, № 6806: Ե. Մուշեղյան, Հատկանշական ցուցակ թանգարանային ժողովածուների: Պրակ I, Եր., 1964, № 56:

¹⁹ Ռուստոմ բժ. Երզնկեանց, Հնախօսական տեղագրութիւն Հաղբատայ աշխարհափռչակ վանից սրբոյ Նշանի: Վաղարշապատ, 1886, էջ 82:

րով վերադառնալ նորոգեալ պահարանիս և / օծմամբ ոսկով յօրինել և զարդարեալ ետու / ի յա/նուն նոյն մասին Գեորգեա և մըշտանցեմատր / յիշատակ ինձ Դաւիթ Սուլթանեանիս և կողակցոյն իմոյ Մարիամին և ծնողացն հանգուցելոց / իմոց Գրիգորին և Նիխաբեթին և որդւոց իմոց / կենդանեաց Յովհաննէսին և Ովսանային և հանգուցելոցն Շուշանին և Փիքրոնեայ: Գրեցա / ի 1824 ի Թիֆլիզ: 1839 թվին մասնատուիւր վերանվիրվել է Էջմիածնին²⁰:

²⁰ Ս. Գեորգի պատկերով մասանց երկու պահարան է եղել Թեյալի նոյնանուն եկեղեցում (կառուցվել է 1793 թ.): Պահարաններից մեկն արծաթյա էր, ոսկեօծ, վրան դրվազված էին ս. Պետրոս և ս. Պողոս առաքյալները: Մասնատուի ներսում հատուկ պահարաններ էին պատրաստված, որոնցում տեղադրված էին մի քանի սրբերի մատուցներ: Արձանագրությունն էր. «Յիսուս Քրիստոս տէր բարերար. քեզ յան թշնամե՛ որ սիրէ չար. և դու Գեորգ սուրբ զօրավար, որ վս մեր վկայ յեղեալ օգնական լեր Յօհաննէսին»: Մյուս փեղկին կար հետևյալ արձանագրությունը. «Եւանգուլանց Զարաթի կողակից Մայիայն ընծայեցի Թեյալ սրբոյ Գեորգայ եկեղեցոյն յունվարի 17 ին թուին վրաց 491» (1808 թ.): «Ողջոյն ըս քեզ Մարիամ լոմն դու ողորմեայ տէր Սարգսին», «ի թուին ՌՄԼԸ (1789) ի ժամանակս Հերակս արքային՝ ես ամենամեղ տէր Սարգսին Թեյալ քաղաքի սուրբ Գեորգայ անուամբ կառուցեալ եկեղեցոյ. յետմեայ քահանայն որդի տէր Սարգսի. Ասագ քահանայի շինեալ տուայ զայս մասանց պահարանն. ի յիշատակ իմ և իմ ծնողացն հոգւոյն. նա և զայս անցաւոր աշխարհես մեզն և ի վաղելում իմ և իմ որդոցն վս զի բազում ջանիւք զայս սրց մատուցներն ճարեցի և երկու բարերարք ևս ճարեցի. տէր Մէթի որդի Յովհաննէսն. և Մէլիքի եղբայր Պապայն. հարիւր մսկալ արծաթէ առնող եղևն և ալ սորա միսին իմ հաշուեալ արդեամբն եղև. վս աղաչեմ Գաեղոցաց և տեսողացք միտլ ողորմիս զիս տր Սարգսին և վերոյ գրեալ անձանց յիշէք. և դուք յիշեալ յիշիք ի Բա»: Երևան, Մատենադարան, Կաթողիկոսական դիվան, թղթ. 44: վավ. 329, թերթ 3բ:

Մյուս մասնատուին ուներ հետևյալ արձանագրությունը. «Յիշատակ է պահարանս մասանց քաջայողթ վկային Քրիստոս սրբոյն Գեորգեայ և Սարգսայ. Թեյալեցի տէր Գրիգորեանց, տէր Արուսիկն և կենակցոյն Մայիկին. և ի տէր հանգուցեալ ծնողացն նորին տէր Սահակին և Դարեշանին. և եղբարցն տիրացու Առաքելին, Գրիգորին. Գեորգին և ի տէր հանգուցելոցն. և կենդանի եղբոր Ստեփանին. իւր եղբոր որդւոյ Ահարօնին Մովսէսին և Դաւթին. և դստերացն Մարթային. և Կատարին. ի հալար արդեանց տէր Յարութինին

Այս արձանագրություններում արտացոլված են մի շարք պատմա-հասարակական երևույթներ: Միաժամանակ պարզվում է, որ XVIII դ. վերջում Մոսկվայում աշխատում էր հայ շնորհալի արծաթագործ Դավիթ Աստվածատրյանը:

Հավաքածուի մասնատուներից պետք է առանձնացնել նաև ս. Գեղարդի պահարանը, Ղունկիանոս հարյուրապետի միգրակի ծառին ամրացված այն գեղարդի, որով խոցեցին Քրիստոսին (Մեսաղ № 730):

Գեղարդի մասին քազմաբովանդակ հիշատակություններ կան: Հայաստանում նրա գտնվելու վերաբերյալ առաջին գրառումը պատկանում է Ագաթանգեղոսին («Անդկայ Գեղարդն Ղունկիանոսի հարիւրապետին՝ որով խոցեցաւ կող փրկչին՝ և քրոյ խեաց ջուր և արիւն, նշանակ մկրտութեան և հաղորդութեան»): Ս. Գեղարդին շարական է նվիրել Վարդան Բարձրաբերդցին, հատուկ տողեր են նվիրել Մատթէոս Ուռհայեցին, Կիրակոս Գանձակեցին, ուսումնասիրության նյութ են դարձրել հայագետները (Հ. Ծախապետյանց, Գ. Հովսէփյան), հիշատակել են ճանապարհորդները (Տալեռնիե, Ջեյմս Մորիեր, Մ. Կոցերու, Ռ. Կեր Պորտեր) և այլք:

Գեղարդի պահարանը պատրաստել է տվել Պողոս իշխանը, որի անվան հետ կապված սա առաջին պատմական արձանագրությունն է:

Գեղարդի պահարանը (բարձր. 56, լայնքը 24, կողի հաստ. 5,5) գրավել է հատկապես Գ. Հովսէփյանի ուշադրությունը, որը համարել, ճշտել ու հրատարակել է նրա արձանագրությունը²¹:

Գ. Հովսէփյանը Դավիթ եպիսկոպոսի մասին մի ձեռագրի հիշատակարանից քերում է մի հատված այն մասին, որ նա «շինեց զտուփ դուռի. արծաթէ պահարանս անամուխ Գեղարդի նշանի, եւ ակամբք պատուականօք յօրինել ետ եւ ոսկով քրեց. բզմ ծախս զնաց, մինչ ին (25) թուման անելի ոչ պակաս»: Ինչպես տեսանք, պահարանը 1686 թ. վերանորոգել են Գրիգոր և Սարգիս ոսկերիչները: Պահարանի գեղեցկությունը հիմնականում պայմանավորված է բուսական զարդանախշերի հորին-

շինեցեալ է ի վաղեմիւր և իւրանցն վերոյ գրեալց առ ի դուռն սր. Կարապետ եկեղեցոյն. յունվարի եւն ՌՄԾԲ թուին (1793 թ.) ի Թիֆլիս. կազմել և քաջանկար ճարտարապետ ձեռամբ վարպետ Գուրգենին. իսկ յիշատագիրս ձեռամբ աշակերտի նորին Գրիգորի. որոյ փաթութանին»: Նույն տեղում, թերթ 4բ:

²¹ Գ. Հովսէփյան, Խաղաղական..., էջ 188:

վածքներով, որոնք սակայն մի փոքր միօրինակ են, չունեն գծանկարչական հատկություն, պարզ են ու անպաճույճ: Նույն տպավորությունն է թողնում նաև պահարանի փեղկերի արտաքին ձևավորումը, որտեղ Ավետման, Խաչելության տեսարանները, ինչպես նաև Աստվածամոր, բարեխոսի դիրքով Գրիգոր Լուսավորչի կերպարներն իրենց տեղադրմամբ ոչ միայն չեն նպաստում կոմպոզիցիայի հավասարակշռությանն ու ամբողջացմանը, այլև գուրկ են ներքին շարժումից: Ծառ հավանական է, որ XIII դ. բնօրինակը նման էր Խոտակերաց ա. Նշանի և Նոյան տապանի մասունքի պահարաններին, կարող էր և նույն վարպետի ձեռքով կազմված լինել:

Գարեգին Հովսեփյանը գտնում է, որ «Նոյան տապանի» և «Հավուց Թադի Ամենափրկչի» հետ Գեղարդը Արևելյան Հայաստանի ամենամեծ սրբություններից է եղել: Այս միտքը հաստատելու համար նա վկայակոչում է Վարդան պատմիչին՝ բերելով նրա ձեռագրից հետևյալ տողերը. «...Եւ Այրիվանքն, ուր կան սբ. Գեղարդն ածայ մուխ, ներկեալ արեամբ կենաորին եւ տախտակն սբ. Տապանակին Նոյեան Նահապետին»²²:

Էջմիածնի հավաքածուի մի քանի մասանց պահարաններ քառանկյուն են՝ վերևում գմբեթավոր և շքեղ զարդանախշերով: Հետաքրքիր ստեղծագործություն է Կարինում պատրաստված 1815 թ. մասանց պահարանը, որի հեղինակը ոսկերիչ Օհանեսն է (Մետաղ № 728): Կան նաև մասնատուփեր՝ արծնյա հավելումներով: Արծ-

նյա քիչ իրեր են մեզ հասել, իսկ այս մասնատուփերը գեղեցկագույն օրինակներ են:

Հավաքածուի գեղեցիկ իրերից են փոքր մասնատուփերը՝ նշարքատուփերը: Դրանք հիմնականում ձուլածո են կամ դրվագված, խխունջանման են, կլոր կամ ձվաձև, ներսից ոսկեգոծ են, երբեմն ետևի երեսին ունեն մկրատովական արձանագրություններ կամ այլ կարգի հիշատակություններ: Որոշ մասնատուփերի մեջ մասունքի փշրանքներ են պահպանվել: Սրանք ավելի ձեռքի տակ օգտագործելի մասնատուփեր էին կամ ամրացվում էին կրծքին (երբեմն շղթաներով հանդիպող օրինակներ կան): Որպես կանոն, փոքր մասնատուփերի Ա երեսին գրաֆիկական գծով կամ դրվագված Աստուծո Գառն է պատկերվում: Լավագույններից է 1656 թ. Էջմիածնում պատրաստված (արծաթ, ոսկեգոծ) և Հակոբ Ջուղայեցի կաթողիկոսի կողմից Երևնայի ա. Կարապետ վանքին նվիրաբերված մասնատուփը (Մետաղ № 361): Հավաքածուի հետաքրքիր իրերից են այն մասնատուփերը, որոնց վրա պատկերված է վիշապին խոցող ա. Գևորգը: Սրանց հայրենիքը Ռումինիան է: Կան նաև հունական ծագում ունեցող ընտիր աշխատանքներ:

Էջմիածնի վանքի հավաքածուի մետաղի բաժնի հետաքրքիր ստեղծագործություններից են աչերը: Դրանք հնագույն ժամանակներից ընդունվել են Հայ Եկեղեցու կողմից: Մաղաքիա արքեպիսկոպոս Օրմանյանը գտնում է, որ աչերն ավելի հին ծագում ունեն, քան մասնատուփերն ու մասանց պահարանները²³: Աչը պայմանական հասկացություն է, քանի որ բազկի տեսք ստացած և ձևավորված արծաթյա ոսկեգոծ աչի մեջ դրվում էր սրբի մարմնի որևէ մասը (հիմնականում գագաթի կամ վերջավորությունների ոսկորների փոքր հատվածը): Աչերը հիմնականում պատրաստվել են ձուլման եղանակով: Հանդիպում են նաև աչեր՝ գուգաթելի հավելումներով: Դրանք հարթ են, եղունգների ընդգծված եզրագծերով: Երբեմն որոշակի տեսարաններ են դրվագվում, իսկ շատ հաճախ նրանց գեղարվեստական հարդարանքը հարստացվում է թանկարժեք քարերով ընդելուզված ապարանջաններով կամ մատանիներով: Լավագույն օրինակներից է ա. Հակոբ Մծբնա Հայրապետի աչը (1709 թ.), որի վրա ամրացված են շատ ավելի ուշ ժամանակներում պատ-

²² Գարեգին Հովսեփյան, Խաղբակեանք..., էջ 201: Հրատարակված է նաև տուփի վրայի արձանագրությունը (հավելված Ա. 15), էջ 304—305: Տես նաև՝ Ստեփանոս Մխիթարեանց, Ստորագրութիւն հոչակաւոր մեծի ուխտին Այրի վանաց Սրբոյն Գեղարդայ: Վաղարշապատ, 1878: Գեղարդը հատկապես ժամտախտ փրկող սրբություն է համարվել: Այդ մասին գրել է ճանապարհորդ Ջեյմս Մորիսը (Հովհ. Հակոբյան, Ուղեգրություններ: Հ. 2, Եր., 1984, էջ 329): XVIII դ. վերջում Թիֆլիսում բրոնզեղված ժամտախտի ժամանակ վրաց Գեորգի XII արքան խնդրում է Թիֆլիս ուղարկել Գեղարդը: Ղուկաս կաթողիկոսը ուղարկում է ա. Հակոբի աչը: Երևան, Մատենադարան, Կաթողիկոսական դիվան, թղթ. 6, վավ. 148: Նույն նպատակով Թիֆլիսից Գեղարդը խնդրում են նաև 1818 թ.: Նույն տեղում, թղթ. 24, վավ. 98: Գեղարդը ցուցադրված է Մալր տաճարի թանգարանում: Մեկ այլ Գեղարդ պահպանվում է Գանձատան պահեստում, որը, ըստ ավանդության, պատմական առումով շատ ավելի առաջնային է:

²³ Մաղաքիա արք. Օրմանեան, Ծիսական բառարան: Անթիլիսս, 1979:

րաստված զարդեր (խաչեր, մատանիներ): Առաջնակարգ և առանձնակի հետաքրքրություն է ներկայացնում Գրիգոր Լուսավորչի աջը:

Հայ ժողովրդի նյութական մշակույթի գանձերի մեջ այս աջը յուրահատուկ տեղ է գրավել:

Զանազան բնույթի պատմական և ավանդական դեպքեր են կապված Գրիգոր Լուսավորչի աջի հետ: Աջի պատմական գոյության փաստը, Ստում գտնվելը և 1444 թ. Էջմիածին տեղափոխվելը Ա. Դավրիժեցին հաստատում է ձեռագրերի հիշատակարանների վկայություններով (նըրա «Պատմության» Լ գլուխը հատկապես աջին է նվիրված): Մեծագույն երևույթ է եղել Գրիգոր Լուսավորչի աջի և Խաչվառի Սսից մինչև Էջմիածին ընկած ճանապարհի անցումը (Աղթամարում հանգրվանելը, քաղաքների, գյուղերի և ավանների բնակիչների կողմից դիմավորվելը և այլն: Աջը Էջմիածին է հասնում 1441 թ.): Կարելի է նաև մեկ այլ պատմական փաստ: Ծառ Աբբաս Ա-ին անհրաժեշտ էր 1604—1605 թթ. Նոր Զուղա տեղափոխված Երեւանի և Նախիջևանի գավառների ժողովրդին կապել Սեֆյան Իրանի նոր մայրաքաղաք Սպահանի հետ: Այդ նպատակով նա մտադրի էր Նոր Զուղա տեղափոխել նաև Էջմիածնի Մայր տաճարը (1614 թ. նա Նոր Զուղա տեղափոխեց 15 կտոր քար, որոնք պահպանվում են ս. Գևորգ կամ Խոջենց ժամ եկեղեցում): Նույն այդ ժամանակ Նոր Զուղա տարվեցին Գրիգոր Լուսավորչի աջը, ոսկյա կազմով մի ավետարան և արծաթյա մի խաչ: «Ամենայն ազգն հայոց, որք կային ի քաղաքն Ասպահան... ելին ընդ առաջ Լուսավորչի Աջոյն՝ խաչվառով, և անտարանա, խնկօք և մոռեղինօք, և երգօք եղանակօք, և բազում պատուով բերեալ հանգուցին ի տուն խօջայ Սաֆարին, ընդ նշխարաց արքունոյ կուսին Հոփսիմեայ, և ընդ այլոց արքութեանցն, որք անդէն կային»²⁴: Երկար պայքարից հետո, գաղտնի ճանապարհներով, Փիլիպոս կաթողիկոսը 1636 թ. կարողացավ աջը ետ վերադարձնել Էջմիածին: Գրիգոր Լուսավորչի աջի մասին Ա. Դավրիժեցու վկայությունները հաստատու-

վում են ժամանակագիրների հիշատակություններով: Ահա դրանցից մի քանիսը. 1447 թ. աջը գողանում են Սսից, 1461 թ. Զաքարիա կաթողիկոսը աջը Աղթամար է բերում, 1478 թ. Սարգիս կաթողիկոսը Աջը տանում է Հեղար բեկին, 1479 թ. Վրթանես եպիսկոպոսը այն բերում է Էջմիածին, 1614-ին տանում են Նոր Զուղա, իսկ 1639-ին վերադարձնում Էջմիածին²⁵:

Աջի վրա փորագրված են դրվագներ Գրիգոր Լուսավորչի կյանքից: Արձանագրությունն է. «Յաւորս մեծի հայրապետի Զուղայեցի տեառն Յակոբի թին Հայոց ըստ տումարի, ՌՃԶ ամի (1657 թ.), ի յիշատակ Ստեփաննոս Իովացի վարդապետի, նոր պահարան Աջոյ ձեռին սուրբ Գրիգորին Լուսավորչի, կազմեալ եղև Էջմիածնի, առ ի պարծանս Հայկայ գարմի»: Աջի թաթին ոսկե ապարանջան է ամրացված՝ հակինթներով ընդելուզված բանվածքներով և արձանագրությամբ. «Յիշատակ է ապարանջան Թիֆլիզեցի Մարիամ Ծաշինի ի յաջ սուրբ Էջմիածին, ի 1770»:

Ս. Թադևոս առաքյալի աջը նույնպես XVII դարի գործ է: Սրա ծագումը կապված է Վասպուրականի հետ: Այն պատրաստված է ընտիր գուգաթելով, ոսկեգօծ է, վրան թանկարժեք քարեր կան: Հետաքրքրական պատմություն ունի ս. Կարապետի աջը: Այն ու վրայի խաչը պատրաստվել են XIV դարում, վերանորոգվել 1665 թ. Աղանաչում: Դրվագման տեխնիկայի վարպետությունը թերևս առաջնակարգ լինել, եթե սպիտակ քարերի գուգորդումը նոնաքարերին այդքան չճանաչաբեռներ խաչի ընդհանուր կոմպոզիցիան, որը սակայն չի դադարում ջբեղության պատրանք ստեղծելուց:

Աջերի համար հետազայում պահարաններ են պատրաստվել. 1701 թ. Զմյուռնիայում Գրիգոր Լուսավորչի աջի համար (Փայտ № 21), Հակոբ Մծբնա Հայրապետի աջի համար (1780 թ., Զմյուռնիա, Փայտ № 28), ս. Թադևոսի աջի համար (XVIII դ. Նոր Զուղա, Փայտ № 30), որոնք ընդելուզված են գաղտնիկորով:

(Ծարունակելի)

²⁵ Մանր ժամանակագրություններ: Հ. 1, Եր., էջ 143, 144, 319—325, 326, 336: Ստեփանոս Իովացին՝ Ստեփանոս Լեհացին է:

²⁴ Առաքել Դավրիժեցի, նշվ. աշխ., էջ 160: